**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**

**ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

**ք. Երևան** **«12» դեկտեմբերի 2019թ.**
**ժամը $15^{30}$-ին**

***Մասնակցում էին՝***
***Հանձնաժողովի նախագահ՝***
***<u>Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)</u>***
Սուրեն Շախվերդյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի օգնական
***<u>Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ )</u>***
Մարիամ Բաղդասարյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի Իրավական ապահովման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ
Սարգիս Սարգսյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության հաշվապահական բաժնի առաջատար մասնագետ
***<u>Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)</u>***
Ավետիք Խուդինյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի վարչատնտեսական վարչության շահագործման բաժնի գլխավոր մասնագետ
Վազգեն Քեոյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի վարչատնտեսական վարչության մատակարարման բաժնի շուկայագետ
***Հանձնաժողովի քարտուղար՝***
***<u>Գնման Պատասխանատու /Մրցույթի Համակարգող (ԳՊ/ՄՀմ)</u>***
Արմենուհի Մանուչարյան՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության բյուջետային կառավարման և գնումների բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկություն ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի նախահաշվային գնի մասին.**

1.1 ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի առաջին չափաբաժնի նախահաշվային գինը կազմում է 150 000 ՀՀ դրամ, իսկ երկրորդ չափաբաժնի նախահաշվային գինը կազմում է 80 000 ՀՀ դրամ:

**2. Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

2.1 ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2019թ. դեկտեմբերի 5-ին armeps.am, gnumner.am պաշտոնական կայքերում:

2.2 ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի ու հայտարարության փոփոխություն չի կատարվել:

2.3 Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. դեկտեմբերի 12-ը ժամը 15:30-ը:

**3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.**

3.1 Հայտերը բացվել են armeps.am համակարգի միջոցով դեկտեմբերի 12-ին ժամը 15:30-ին: ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

**Չափաբաժին 1**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցե | Ծառայության անվանումը | ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ | Desinfection.c@mail.ru | Դեռատիզացիայի ծառայություն | 180 000 | 180 000 |

**Չափաբաժին 2**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցե | Ծառայության անվանումը | ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ | Desinfection.c@mail.ru | Դեզինսեկցիայի ծառայություն | 120 000 | 120 000 |

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերով սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**5. Տեղեկատվություն՝ Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

5.1 ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

**6. Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ Հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

6.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է Հրավերով սահմանված կարգի պահանջներին: Մասնակցին ծանուցվել է ներկայանալ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին, որոնց անցկացման համար օր է նշանակվել 17.12.2019թ., ժամը 15:00-ը, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեն:

**7. Տվյալներ միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ.**

7.1 Միաժամանակյա բանակցությունները անցկացվել են 17.12.2019թ., ժամը 15:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում: Արդյունքում մասնակցի գնային առաջարկը ստացել է հետևյալ տեսքը.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցե | Ծառայության անվանումը | ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ | Desinfection.c@mail.ru | Դեռատիզացիայի ծառայություն | 180 000 | 180 000 |
| 2 | «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ | Desinfection.c@mail.ru | Դեզինսեկցիայի ծառայություն | 100 000 | 100 000 |

**8. Հանձնաժողովը որոշեց՝**

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ առաջին և երկրորդ չափաբաժինների մասով մերժել «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ին՝ գնման հայտով սահմանված գինը գերազանցող գնային առաջարկ ներկայացնելու պատճառով,

2) Հաստատել չկայացած գնանշման հարցման ընթացակարգի մասին հայտարարության տեքստը:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները՝**

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | | Սուրեն Շախվերդյան |
| անդամներ՝ | | Ավետիք Խուդինյան |
| | | Մարիամ Բաղդասարյան |
| | | Սարգիս Սարգսյան |
| | | Վազգեն Քեռյան |
| քարտուղար՝ | | Արմենուհի Մանուչարյան |